# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՂԻԱ ՔԱՀԱՆԱՅԻ

157. Եւ գնաց կինն, եբարձ փայտ և եբեր ի մէջ յատենին Թափեաց և ասաց, «Յառաջ ես կայրիմ և ապա իմ էրէցն»:

158. Յայնժամ սրով հարին զկինն և խոցոտեալ յուղարկեցին ի տունն: Եւ բորբոքեցին հուր. և առեալ զնա կապանօք տարան առ ի յայրել. և նա ուրախութեամբ և սաղմոսելով երթայր որպէս ի հարսանիս:

159. Եւ տարան մերձ հրոյն և հարցանէին թէ «Կու տաճկանա՞ս». և նա անդադար զՔրիստոս Աստուած դաւանէր: 160. Եւ դարձեալ զկուլակն ածիլեցին և կանաչ կապեցին ի գլուխն. և ասացին թէ «Թլփատեցէք որ յակամայ տաճկացնեմք»:

161. Ասաց Տէր Եղիայն եթէ «Զգլուխս հատանէք՝ կարող էք. բայց յիմ հաւատոյն չեմ որոշիլ: Ես կու հաւատամ ի Սուրբ Երրորդութիւնն և մի Աստուածութիւնն, ի Հայր և յՈրդին և ի Սուրբ Հոգին»:

162. Խաչ եհան յերեսն և ասաց. «Քրիստոս լոյս է, կենդանի է, անմահ է. որպէս կու փոխեմ ի մահկանացուին հետ, որ մեռեալ է և ոչ կենդանի»:

163 Յայնժամ զլեզուն ճեղքեցին և ոչ խապառ կտրեցին թէ «Վաղիւն մեզ մօլայ լինելոց է». և յաջոյ մատն ճեղքեցին թէ «Վաղիւն մեզ գիր գրելոց է». 164 Եւ այլ բազում

157. Պ գնաց երէցկինն | Ս եբարձ ի յագուն իւրոյ ի յատեանն եւ եբեր թափեաց ի յատեանն. Պ բերացուեցաւ զփայտն եւ բերաւ թափեաց ի մէջ ատենին | Պ կու այրիմ. Ս այրիմ | Ս քահանայն. 158. Պ յայնժամ կատղեցան տաճկունքն՝ սրով հարեալ խոցեցին իրէցկինն զրկեցին ի տուն իւր. Ս յանժամ յարեալ զիրէցկին եւ վիրավորեալ ուղարկեցին ի տունն | Պ հուրն | Պ չիք զնա | Ս տարան որ եղիեան կապանօք | ՊՍ այր առ ի այրել | Պ չունի սա | Ս խընդութեամբ եւ ուրախութեամբ երթար սաղմոսելով որպիսի հարսանիս | Պ սաղմոս երգելով (չունի եւ. 159. Պ ի մերձ հրոյն | Ս եւ առեալ տարան առ մերձ հուրն | Ս կուտաճկընաս | Ջ չունի Ած | Պ դաւանէր զՔս. Ած. 160. Ս դրձել բղկուզակին | Պ զգլուխն ածլեցին | ՊՍ կանանչ | Ս զգլուխն. Պ չունի | Պ թլպատեմք | ՊՍ ակամայ | Պ տաճկանայ. Ս ուրացընեմք. 161. Պ եղ ասաց | Պ թէ որ գլուխս. Ս թէ գլուխըս | Ս հատանէք նայ. Պ կտրէք | Պ չունի կարող էք | Ս բայց ես ի հաւատոս ոչ ելանեմ. Պ ես իմ հաւատն ոչ ուրանամ | Պ եւ հաւատամ միշտ. Ս հաւատամ | Պ սուրբ. Ս զամէնայաբ | ՊՍ չունին եւ մի ածութիւնն | ՊՍ հայր եւ որդի եւ սուրբ հոգի. 162. Պ եւ խաչակնքեց զերեսն եւ ասաց | Ս քսէ լուս կենդանի եւ անմահ. Պ քսի լոյս կենդանի եւ անմահն | Ջ կու փոխիմ | Պ որպէս փոխեմ ի մահկանացուէն կէտն. Ս իսկ որպէս փոխարկեմ ի մահկանացուն լոյսն ընդխաւարի | Ս մեռել. 163. Ս նոյ ճղղքեցին | Ջ չունի եւ ոչ խապառ կտրեցին | Ս կտրեցին. Պ խտրեւին | Ջ չունի վաղիւն | Պ մեզի մօլայ | Պ զձախ. Ս դրձել զձախ | Ս ճղղքեցին | Պ մեզի | Ջ չունի գիր. 164. Ս զայլ | Պ վիշտ | Պ նեղութիւն. Ս ընդեղութիւնս | Պ չունի հասուցին | Պ զոր ինչ որ գրեցաք այս փոքրիկ տետրակիս | Ս զորս մի ըստ միոջէ գրել չէ կարեցաք

վիշտս և նեղութիւնս հասուցին, զոր ոչ գրեցաք ի յայս փոքր նամակս. այլ ի մեծ նամակին գրեալ կայ։ 165. Եւ յորժամ տեսին այլազգիքն որ զմահն յանձն է առեալ, զի ոչ կարացին խախտել ի սիրոյն Քրիստոսի, ասացին թէ «Լաւ է որ ի վերայ սորա արեան գին կտրենք, քան թէ սպանանենք»։

166. Յայնժամ կոչեցին զՄկրտիչ վարդապետն և զքահանայսն և ասացին թէ «Եկէք գնեցէք զայս էրէցն»։

167. Երբոր լսեցին զայս քրիստոնեայքն, յոյժ ուրախացան, ժողովեցան և գնացին առ ամիրայն և կտրեցին արեան գին 740 ղրուշ և շարդ կտրեցին թէ «Այսօր պիտի բերէք, թէ չէ վաղիւն կու տաճկացնեմք զէրէցն»։ 168. Եւ եասախ արարին Հայոց թէ «Մարդ Տէր Եղիային զրամ թող չի տայ փոխ». այսու հնարիւք կամէին յաղթել զՏէր Եղիայն։

169. Յայնժամ վարդապետն ի հետ Հայոց ազգին այլ ուրիշ բան թէպտէր արար, և այլ ուրիշ բանի համար գնացին շահով զրամ առին և բերին տուին ի յերիցակինն։ 170. Եւ նա գնաց ետուր զարեան գինն, իբր ի յիւրմէ տանէն, որ Հայոց ազգին պակասութիւն չառնէին և այսպիսի հնարիւք ազատեցին զՏէր Եղիայն։

171. Եւ յետ ելանելոյն ի բանտէն՝ ծախեաց որչափ ոսկեղէն և արծաթեղէն և պղնձեղէն որ ունէր և ետուր զարեան գինն վասն Քրիստոսի լոյս հաւատոյն. և ազատեաց զե-

փխ. զոր ոչ... կայ | Պ չունի գրեալ. 165. Ա այլազգիքըն. Զ այլազգն | Պ ի յանձն առեր է զի. Ա ի յանձըն էառ որ | Ա խախտեցուցանել. Պ մեկնել | Ա եւ ասացին. Պ ասացին ի մէնջ իւրեանց | Պ լաւ է սորա արեան գին առնել քան թէ սպանանել | Ա ըսպանանեմք. 166. Պ կանչեցին. Ա կոչեցին | Ա չունի Մկրտիչ | Ա զքահանայքըն. Պ քահանայքն | Ա չունի եւ ասացին | Պ էրէցնիդ. 167. Պ երբ | Պ քրիստոնեայք զայս խօսքս. Ա զայս քրիստոայքըն (ս գրին վրայ պատի) | Զ ժողովեցինան (ին կէտերով ջնջուած) | Ա եւ ժողովեցան գնացին | Պ եւ ժողովեցան ամիրայըն գնացին | Ա արեանն | Զ էճ. ըռլ. Ա էճղշ. Պ էճ մառշիլ. բնագիրը պիտի ունենար պատուով ղռշ. զոր Զ կարդացեր է ըռլ՝ իբր թիւ, Ա համառօտեր է ղշ եւ Պ թարգմաներ է մառշիլ | Զ շարտ | Պ դրին. Ա էդին | Ա պատեր բերել. Պ բերէք առակն | Ա եւ թէ վաղիւն մնայցէ կու տաճկացնեմք եւ դուք փոշմանիք. գրձեալ եասախ | Պ կու տաճկացունեմք եւ եասախ. 168. Ա փող դրամ ոչ տացէ. Պ դրամ փոխ չի տայ | Ա զի այսու | Զ հնարիւքս | Պ չունի զտէր եղիայն. 169. Պ եւ յետոյ վարդապետն ուրիշ խորհուրդ արար ի հետ ազգին հայոց. գնացին ուրիշ բանի համար շահով ստակ առին տուին իրիցկնոջն եւ նա առաւ գնաց եւ տըւաւ արեան գինն իբր թէ իւր տունէն է. Ա յետոյ մկըրտիչ վրդպտն. այլ եւ ուրիշ խորհուրդս արարեալ գնացեալ շահով դրամն առեալ էբէր ետ էրէցկընօջն ետուր եւ գնացեալ ետուն արեան գինն առ եղիեային. որ գիտացին թէ իբրեւ իւր տանէն էտ զդրամն փխ. յայնժամ... տանէն | Զ բեր տվին. 170. Զ չունի ազգին | Զ զնասն | Պ չառնէն. Ա չառնիցէն | Զ հնարիւքս ազատեաց զսա. 171. Զ թէ որչափ |

րիս եկեղեցին, զՀայոց Սուրբ Ստեփաննոսն և զսուրբ Կարապետն և զԱռաքելոց զՏիրամայր Սուրբ Աստուածածինն և զերկու քահանայս Հայոց՝ զՏէր Սահակն և զՏէր Ղուկասն. 172. և ինքն ազատեցաւ ի ձեռաց անօրինաց, որ չորս ցեղ լեզուի գիտակ էր և ոսքօք յաղթեաց գրոց վկայութեամբն:

173. Եւ գնաց ի Մալաթիայ և եհան Ֆէթվա. և անտի գնաց ի Մերտին ի Տաճկաց մեծն և յՈւռումիայ շէխն և հանեաց Ֆէթվա և եբեր ի յԱմիթ և արար սիճիլ և եհան ի յԱմթայ փաշայէն էմր և եբեր ի Խարբերդ: 174. Եւ գնաց Ըստամպօլ և հանեաց հինգ էմր. սիճիլ ու հիւճաթ արաց թէ այսուհետև այլազգիքն ի հետ քրիստոնէից համ ի հետ եկեղեցեացն տուէտ տալապայ չանեն ու բնաւ ամենևին ի հետ քահանայիցն չար չխօրհեն. և ապա հաւանեցայց գնաց: 175. Եւ որ ինչ ունէր՝ զամէնն ծախեաց և ետուր նախ 400 ղուռշն, և մնաց ի վերայ նորա 300 ղուռշ: Եւ յետ ազատելոյն երկուամիս հիւանդ մնաց Տէր Եղիայն և ապա առողջացաւ ի միրայն:

Զ չունի եւ պղնձեղէն որ | Ա որչափ եւս որ ունէր ոսկեղէն կամ արծաթեղէն պղնձեղէն եւ զամէնայն ինչ ապրանս | Զ վասն անուանն | Պ յետոյ ետուր արեան գինն վասն քսի լաւ հաստատուն մնալոյն. Ա ետուր գինը արեանն գին վսն հաւատոյն եւ սիրոյ գդոյն յսի քսի՝ փխ. եւ ետուր... հաւատոյն (Պ լոյս հաւատոյն կարդացեր է լաւ հաստատուն) | Զ հաւատոյն համար | Զ զգ. եկեղեցին. Ա զերիս եկեղեցիս ի ձեռաց անօրինաց. Պ զեկեղեցիքն | Պ զբ. ածածնին առաքելոց եւ զբ. ստեփաննոս եւ զբ. կարապետ. Ա ըզսբ. ստեփաննոսին եւ կարապետին հայոց եւ զառաքելոց սբ. ածածնայ եկեղեցին՝ փխ. զՀայոց... Ածածինն | Զ զկարապետն. մեզմէ աւելցուցինք զսուրբ՝ ըստ վերնոց | Զ բ քահանայ. Պ քահանայքն երկու | Ա խուկասն. 172. Ա եւ զինքն որ ազատեցան | Ա վասն զի փխ. որ | Ա ազգի փխ. ցեղ | Ա լեզվու. Պ լեզուէ | ՊԱ կարդալ գիտէր փխ. գիտակ էր | Պ սուրբ գրոց վկայութեամբն զչար այլազգիքն. | Ա եւ գրոց վկայութեամբ յաղթեաց նոցա. 173. Պ եւ յետոյ | Պ հանեց. Ա հանեաց | Զ Ֆաթվայ. Զ զՖեդվան անդ | ԶՊ չունին անտի | Պ ի մտրինայ | Զ տաճկաց մեծն. Ա ի մէծըն տաճկաց | Պ եւ ռումէլի. Ա ուռումեա | ԶՊ շեղն | Զ Ֆաթվա,. Ա զՖեդվան անդ եւ անտի | Պ համիտ. Ա յամիթ քաղաք | Ա սիճիլ էհան | Ա ի համիդու փայայէն. Պ համիտայ փաշային | Զ ամր. Ա էմր | Ա չունի եւ եբեր ի խարբերթ | Պ խարբերդ. 174. Զ ըստամբօլ. Ա ի կոստանդնուպօլիս | Պ հանեց. Ա անդ եւս հանեաց | Զ ե ամր. Ա էմր որ հինգ յեմր եղեւ եւ էբէր ըզամիրներն | Զ սիֆիլ հոճաթ. Պ սիճիլ ու հէօճէթ. Ա հիւճաթ | Պ արաւ. Ա անել ետուր | Զ որ | Զ չունի այսուհետեւ | Ա այլազգին | Ա հետ քրիստոնէից | Պ կամ եկեղեցեի. Ա կամ եկեղեցոյ | Զ տուփ | Պ տալապ եւ մարաղայ | Զ չառնեն | Ա տէվայ կամ ի հետ քրիստոնէից հակառակութիւն չնէն | Զ որ բնաւ | Պ ու ամենեւին | փխ. ու բնաւ... եւ յետ՝ Ա եւ այսպիսի բանիւք հաստատեց զգործն հաւանեցոյց ինքն յետ | Պ քրիստոնէից վրայ փխ. ի հետ քահանայիցն | Պ չի խորհին | Պ հաղիւ հաւանեցուց. 175. Զ չիք եւ | Պ ծախեց | Պ չունի եւ | Պ նաբ դահեկանն. Զ դճ ղռուշ | Զ մնաց ի վրան | Պ դահեկան | Պ հիւանդացաւ.

176. Զայս ամենայն չարչարանս և զնեղութիւնս կրեաց վասն անուանն Քրիստոսի: Եւ վասն այդ պատճառիդ շրջի ի դրունս ողորմածացդ՝ խնդրել զողորմութիւն ի սիրելեացդ Աստուծոյ: 177. Դուք այլ վասն սիրոյն Քրիստոսի և յուսոյ արքայութեանն արարէք զմայ ողորմութիւն. որ դա մեծ քաջութիւն արար և ուրախացոյց զքրիստոնեայսն:

178. Բայց դուք մի՛ ձանձրանայք, զի հաւատոյ գին է, և այլ բան չի՛ նմանիր. զի մարտիրոսական քաջութիւն արար և Աստուած ազատեցոյց ի ձեռաց անօրինաց: 179. Դարձեալ խրիցակինն այլ բարի խրատ տալով ամրացոյց զսիրտ քահանային՝ ասելով թէ «Մի՛ երկնչիր. վասն սիրոյն Քրիստոսի յառաջ եմ կու այրիմ և կու քարկոծուիմ, և ապա դու»:

180. Այսպիսի քաջարտութեամբ աղնդեաց ի սիրտ քահանային առ Աստուած և ազատեցան ամենայն քրիստոնեայք ողորմութեամբն Աստուծոյ. և այսպէս բարի ճանապարհաւ առ ի կեանս փոխեցան:

181. Որոց բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի, այսպիսի փորձանաց պահեսցէ ի խնամս իւր, որ բարի վարուք ննջեմք ի յոյս մեր Յիսուս Քրիստոս. և յետնում աւուրն յաջակողմեան դասուն արժանի արասցէ. որում փառք և պատիւ, այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

182. Զպարտ մեր միով հայր մերիւ անցանել և յաւ իմանալ և պահել ի միտս մեր, զի այսպէս փորձութիւնք սատանայի է և յուսամք յԱստուած, զի պահեսցէ զմեզ յամենայն ժամ:

183. Կատարեցաւ բանքս այս վկայութեամբ Ասորոց պատրիարգին և Մինաս վարդապետին և Խաչատուր վարդապետին, Պօղոս վարդապետին և Յովհաննէս վարդապետին և Մելքիսէթ վարդապետին: 184. Սոցին օրհնութիւնն հանապազ ընդ ձեզ և ընդ մեզ և ի վերայ ամենայն քրիստոնէից. ամէն:

Ս հիւանդութիւն կրեաց. իսկ մնացեալը համառօտելով կը վերջացնէ այսպէս. վասն չարչարանաց իւրոց եւ ապա զազատութիւն ընտացաւ ողջացաւ ի վիրացն եւ ըզկեանս բարեբարութեամբն անցոյց Ազատարարն քս դձեզ եւ ըզմեզ այսպիսի փորձանաց փրկեա ազատեսցէ. քանի որ աստի ենք խաղաղ կենօք պահեսցէ եւ ատեացս ելանելով զերկնից արքայութիւն պարգեւեսցէ եւ իւր օրհնեալ տեսուն արժանիս արասցէ Ամէն. | Պ չունի որ եղիայն, ապա. ի վիրացն. 176. Պ այս ամենայն նեղութիւնս եւ չարչարանս | Զ չունի մեր եՆրադրած կրեաց բառը. Պ քաշեց | Պ սիրոյն | Զ վասն այս պատճառի համար | Պ շրջէւ ի դուռս դուռս ողորմածին | Զ ողորմութիւն | Պ ի սիրելեացն. 177. Պ չունի դուք այլ... ողորմութիւն | Պ դարձեալ այս աէր եղիայն փխ. որ դա | Պ արաւ | Պ զքահանայքն եւ վարդապետքն եւ ժողովուրդքն քրիստոնէից փխ. զքրիստոնեայսն. 178. չունի բայց... նմանիրՊ եւ վասն սիրոյն քսի յանձն էառ զմարտիրոսական քաջութիւնն եւ զմահն եւ ապա ազատեաց զնա Ած այսպիսի անօրինաց ձեռացն. 179. Պ եւ դարձեալ իրիցկինն որ խիստ բարի խրատատու էր եւառաւել խրատ եւ սիրտ տալով ամրացոյց իւր էրէցին սիրտ | Զ խրատով (յետոյ ով ջնջուած կէտերով) | Պ չունի թէ | Զ չունի մի երկնչիր | Զ կայրիմ | կու քարկոծվիմ. Զ չունի. 180. Պ քաջարտութեան | փխ. Այսպիսի... յամենայն ժամ (հմ. 180—182) Զ ունի միայն եւ երիցակինն այլ այս ճանապարհս առ Աստուած փոխեցաւ. Աշ ողորմի ասացէք իւր հոգոյն. ամէն. 181. Պ եւ պահեսցէ. 182. Պ իմալ | Պ զմիտս. 183. կատարեցաւ եւն մինչեւ վերջ ունի միայն Զ | Զ ասորց. 184. Զ աւրնութիւնն |